6. ՇԻՐԻՆ ՇԱՀ

Ժամանակին մեկ թագավորմ կէղի։ Էդ թուգավորին հեչ ըվ-լադ չկաւ Ըվյադ օր չունի, շատ մառախ (մտահոգություն) կէնա։

Կանչեց ուր ռջալ-քբար, ուր մեծամեծ մարդիկ, ըսաց.

— Ես հարուստ եմ, մեռնել կա, օր ես մեռա իմ թագավորու-թեն, իմ սարեն վո՞վ ոտի ժառանդա։

Էդ մարդիկ ըսեցին.— Թագավոր, ի՞նչ էնինք, աստված քու դարդին դարման էնա, մենք ինչ էնինք։ Էլնինք մեր մարդիկ քո-մինք, մատաղ էնինք, աստված կանչինք, բալքի աստվածութեն քզի մեկ ժառանդ տա։

Թագավոր, հ՚առջև աստծուն քառսուն մատաղ էրինչ, քառսուն խամ շիշաք (դեռ չծնած մաքի) մատաղ էրաց։ Ֆախիր-ֆուխարեն կերցուց խմցուց։

Կերան, աստված աղաղակեցին. «Աստված, դու մեր թագավո-րին մեկ բարի ժառանդ տաս, օր էլնի մի տիրապետա»։

Իրիկուն էկան տուն, թագավոր տեսավ մեկ դավրեշմ էկավ, ըսաց.

— Թագավոր ապրած կենա», լսիր եմ դու էրեխա չունիս, քը-զի խնձոր մը կիտամ, կես դու կի, կես՝ քու կնիկ, կճպներ լէ տաս քու կսրխին ուտե։ Քզի էրկու էրեխա կէղի, անուններ չդրիս չուր ես իգամ։

Դավրեշ բաբեն ըսաց ու կորավ, էլ չտեսան։

Ժամանակն էր, կնրան խնձոր, ընցավ ինն ամիս, կնկա ժամանակ օր թրմավ, մեկնավ, պառկավ բերեց էրկու տղա։

Էդ էրկու տղեն մեկ քաջ կէղի, մեկ խողածին կէղի։ Էդ քաջ կթալին ծովու մեջ կէրթա։

Տղեն մնաց, տասնխինգ տարեկան էղավ, շատ լավ տղա էղավ։ Տարավ դրեց վարժատուն։

Մեկ ժամանակմ մնաց դպրոցի մեջ, տղեն ուր քամալն (կատարելություն) առավ, ուր ջամալն (գեղեցկություն) առավ։

Տղեն օր ամեն ինչով լցավ, էլ տնեն դուս չհանին։

Տղեն օր իմացավ դուս արև կա, մարդ կա, բան կա, ըսաց հոր.

— Ես դուս կելիմ։

Վարժապետ ըսաց.— Դառնամ քու պապուն ըսիմ, իղին (հրաման) առնիմ, գամ քղի դուրս հանիմ։

Վարժապետ գնաց թագավորի մոտ, ըսավ.

— Տղեն ներս չի մնար։

Ըսավ.— Լաո՛, օր իմ տղեն կուզե դուս էլի, գնա դուս խանա։

Տղեն ամեն ուսումով լցվեր ա։

Վարժապետին բերեց էնպես խալաթ տվեց օր հաշվեն դուս։ Էկավ խեր ու խերյաթ էնեց, դհոլ բերեց, գուսան բերեց խաղցուց, քեֆ ուրախութեն էնեց, օր ուր տղեն դուս էկավ տնեն։ Մեկ դիհեն ախչիկներ կխաղան, մեկ դիհեն տղեկներ կխաղան, մեկ դիհեն մեծամեծներ կխաղան։

Վարժապետ առավ տղեն էլավ դուս, ըսավ.— Էնա կտեսնի՞ս, պապն ա։

Տղեն գնաց պապու ձեռ պագեց։ Մեծամեծ մարգերու ձեռներ լէ պագեց։ Էլավ գնաց ջհել տղեկներու մեջ ու քեֆ ուրախութեն էնեցին։ Շատ ուրախութեն էդտեխ էնեցին, շա՛տ։

Տղեն էլման դարձավ գնաց ուր տեխ։ Տասն օր մի մնաց ուր տեխ, խեր ճամբեց հ'ետև, առավ գնաց։ Տղեն էկավ, մեկ եռսունքառսուն մարդիկ ուր պես ջհել տղա, ինկան սարեր, կոլորտեն, ավուկուշ կէնեն։

Էն մեկ օր դավրեշ էկավ թագավորի սենյակ։ Թագավոր օր տեսավ դավրեշ էկավ, հ'ինք էլավ հ'առջև կայնավ, ըսավ.

— Իմ տղեն ամեն ուսումով լցվեր ա։

Տղեն բերեցին դավրեշի հ'առեջ։

Ըսավ.— Ձէ՞ էրկու տղա յա, էն մեկել հ'ո՞ւր ա։

Ըսավ.—Քընե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, էն մեկ տղեն քաջ էր, թալեցինք ծովու մեջ, չգիտենք ինչպես էղավ։

Դավրեշ ըսավ.— Ընի սաղ է, ես գիտեմ որտեղ գնացեր ա։ Ես տղի անուն կդնիմ Շիրին Շահ, քուռակի անուն էլ՝ Խարափաշա։

Թագավոր բերեց Դավրեշին խալաթ տվեց, շառավ։

Դավրեշ ըսավ.— Ես քենե բան չուզիմ, ինչ քեզի էղավ՝ աստված տվեց։ — Ձեռ զանեց տղի պառեկին, ձեռ զանեց տղու ձիու պառեկին, ու աներևութացավ, կորավ։

Տղեն գնաց ուր քուռակ լավ մի պահեց, էնպես ձի մի դուս էկավ, օր ամպերու հետ կխաղա, հրեղեն ա։

Պապն էր ըսավ.— Լաո՛, դնա քզի մեկ քսան-եռսուն ընկեր ճարե, դնա քզի քեֆ էրա ձիու պառեկին։

Էտոր ըֆքյար (մտատանջություն) ի՞նչ էր ամեն օր, ամեն օր լուսուն շուտ կելնեն, կէրթեն սարեր, ամեն ժամանակ ուրան նեճիր կբերեր, ջանավար կբերեր, հավք կբերեր։

Էն մեկ օր Շիրին Շահն էր, ընկերտոց ըսեց.

— Դու հ՚մեն մեկ դեհեն գացեք, ես լէ մեկ դեհեն կէրթամ, իրկուն հ՚իգանք էդա տեխ մեկնինք, մեկտեղ քոմինք։

Ընդոնք դացին էն մեկ դին, ինք լէ գնաց էն մեկ դին։ Շիրին Շահ շատ գնաց, ծարվրցավ, հ՚ախբուրմ տեսավ։ Շատ էր ծարվրցեր, հինք լէ, ուր ձին լէ։ Ուր ձին տեխ մի կապեց, հ՚ինք կզվավ հ՚ախբրի վրեն օր ջուր խմե, աչկեց, օր ի՞նչ աչկեց, տեսավ պետվական սուրաթ մի էդ հ՚ախբրի մեջ։ Սուրաթն օր տեսավ, էլ չկըրցավ նը ջուր խմեց, նը բան էնեց, ջատ սեր էնեց էդ հ՚ախբրի վրեն. առավոտուն մինչև հ՚իրիկվան քզեր է էդ հ՚ախբրի վրեն ու կաչկա։ Էլի լալական-ծառական էդ սուրիաթ (նկար) թամաշա կէնա։

Դու մ՚ըսի էդ ախչիկ լէ Քաջանց թագավորի ախչիկն ա. էտի ուր մատներու հետ կխաղա, մատնիկ կպրծնի, կընկնի մըջ հ՚ախբրին։ Օր կպատի մըջ հ՚ախբրին, կքզվի օր մատնիկ հանա։ Կվերու մատնիկ, կտեսնա էլ ուր մատնիկ չի, սուրիաթի մատնիկն ա, ուր մատնիկ կփոխվի, ախչկա մատնիկ կէլնի ուր ձեռ։

Կաչկա օր վախտ արև պատի, ընկերտանք չկան, փան չկա, կէլի խեծի ուր ձիուն, կիգա. արևմտոց ա. կիգա համա նիաթով կիգա, կտեսնա օր ընկերտանք, կանուկ ին, ուր տեխ։

Կըսին. —Շիրին Շահ, էդ ի՞նչ էղեր ա քզի։

Կաչքա օր Շիրին Շահու մոտ նեճիր չկա, հալ չկա, նիաթով (խոժոռված)։ Ինչ օր կզրուցին, ընկերտոց ջուաբ հ՚ուհու չի տա։ Ինչ օր կըսին, հ՚ուհու չլսա։

Կէրթա տուն՝ պապու մոտ, մամու մոտ լէ կէրթա, հ՚ուհու խաբար չի տա։

Առավոտուն գելին ընկերտանք կէրթան ուրիշ թարաֆ (կողմ), Շիրին Շահ էլի կէրթա էն հ'ախբրի վրեն։ Էլի կմնա հ'ախբրի վրեն չուր հ'իրիկուն արև մտի։ Հ'իրիկուն կխեծի ուր ձին, կիգա ընկերտոց վրեն, ընկերտիք լէ ճամբախ կաչքին։

Ըսին.— Շիրին Շահ, քու գլխուն գալած մզի ըսա։

Շիրին Շահ հեչ ջուաբ չտվեց, հ'ուհու չզրուցա։ Էլան էկան տուն։

Ընկերտիք քացին պապու մոտ, ըսին. «Էսման փա մի կա. քու տղեն կէրթա ֆլան տեղ, կիգա, էլ չխոսա»։

Պապ ըսեց.— Դո՛ր կէրթա, գու լէ գացեք, ախր կիմանաք ընչի համար է օր հ'ուհու չխոսա։

Լուսմտին էլան ամեն մեկտեխ քացին էդ հ'ախբրի վրեն։ Շիրին Շահ թողեց ուր ձին, կղվավ հ'ախբրի վրեն։

Ընկերտիք ըսին. «Ախպեր, էրթանք էդ հ'ախբրի վրեն տեսնինք ի՞նչ կա, էդ հ'ախբրի մեջ»։ Կէրթան կքզվին, փան չտեսին։ Շիրին Շահ խաց չուտա, փան չուտա, էս քանի օր ա մառախի մեջ մացեր ա (մնացել է)։

Ինչ կըսին, Շիրին Շահ հ'ուհու ջուաբ չի տա։ Կմնան հ'իրիկվան, կխեծին կիգան, բան չխասկնան։

Էդ մարդիկ ըսին. «Տղեն էլեր ա կմեռնի, մեկ օր չէ, էրկու չէ, թագավոր մըր գլուխ պտի զարկա»։

Կէրթան թագավորին կըսին.— Քու տղեն՝ էմլա փա մի կա, քու տղեն կղվի հ'ախբրի վրեն, է, մենք չգինանք հ'ախբրի մեջ ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Ըսաց.— Ի՞նչ տեխն է հ'ախբուր։

Ըսին.— Է՛, ֆլան տեխն ա։

Ըսաց.— Ես վաղ գիշեր յոթ ձեռ գութան կիտամ՝ խանեք, տարեք հ'ախբուր վարեք կորցրեք օր տեխ հ'ուհու (ամենևին) էլ չէրևա։

Գութան տարան, էման վարեցին օր թացութեն կտրեցին։

Տղեն առավոտուն էլավ, խեծան քացին էդ տեխ, տղեն էր, քնաց զախբրի վերեն։ Կաչկե օր հեչ հ'ախբուր չկա, դոր կօլորտի՝ բան չկա։

Հարի հ'իրիկուն հ'ախբրի հ'ետև կօլորտի տղեն։ Կօլորտի, չօլորտի հ'ախբուր չկըրնա ճարա։ Կեղի հ'իրիկուն, դառնա կիգա ուր տեխ կնստի, պապու ջուաբ լէ չի տա։

Առավոտուն գելին օր էլի խեծին էրթան։ Տեսի օր ընկերտիք խեծած էկած դուա, ուրան կղանչին։ Էլի էրթանք։ Իտոնց պատասխան չի տար հ'ուհու։

Պապ, կիգա տղի մոտ, կըսե.— Քղի ի՞նչ է պատահիր, լաո՛, ընձի ըսա։

Շատ կղոռա վրեն։

Տղեն կըսա.— Ես սուրիաթ իմ տեսի, ես էն աչկան հ՚ետե պտի էրթամ։ Զը ճարես ղէտ աչիկ, ես պտի էրթամ։

Կըսա.— Լաս՛, ես ի՞նչ գինամ էդ սուրիաթ ինչ սուրիաթ ա, կարքվիլ կուղիս՝ քղի կարքիմ։ Վաղ դալալ կէցկիմ քաղքի մեջ, ինչ աչիկ կա՝ դան քու հ՚առեջ, ինչ աչկան կհավնիս՝ էն աչիկ քղի ուղիմ։

Լուսմտին ինչքան աչիկ կեր էդ քաղքի մեջ դալալ ղանչեց, բոմեց թագավորի բաղի մեջ։

Էլավ յոթ ձեռ դհոլ զուռնա, գուսան զարկեց, խաղցին, տղեն էլավ էդ աչիկներու մեջ։ Տեսավ չէ, մեկ աչիկ լէ ուր սուրիաթի նման չեն, չհավնավ։

Պապուն ըսաց.— Ես էսա աչիկներ չըմ առի, չըմ առի, ես պտի էրթամ էն սուրիաթի հ՚ետևեն։

Պապ ըսաց.— Կէրթաս, լաո՛, է իմ ձեռ փա մի կա, ընձի լսես՝ չէրթաս, ես թագավոր իմ, դոր իմ ձեռ թալիմ՝ կիգա, ինչ թագավորի աչիկ կուզիս՝ կուզիմ քգի։ Արի՛ մ՚էրթա, ըդի սեր ա, անիմանելի բան ա։

Զարա չէղավ տղի խետ, գլուխ չ՚մտի։

Թագավոր ըսաց.— Լաո՛, դու դինաս, իմ ձեռնեն փան չի գա։

Լուսմտին էլավ, հարիր ձիավոր դրեց խետ, ըսաց.

— Գացե՛ք էրկու իրեք ավուր ճամբախ բըլքի իմ տղին խրատեք, դառնաք իգաք ետ։

Փիլո մի փարա դրեց տղի խետ, ձիավոր դրեց, տղեն ընկավ ճամբախ, գացին։ Մեկ շորս օր գացին։

Շիրին Շահն ըսաց. —Ես մինակ կէրթամ, դու մամու տեր եք, պապու տեր եք, դուք հ՚որի՞ կիգաք, դարձե՛ք ետ, ես մինակ կէրթամ։

Ընկերտիք դարձան, էն մեկ տղեն կանավ, ըսեց.

Շիրին Շահ, ես մամ չունիմ, պապ չունիմ, դու դոր էրթաս, ես լէ խըտ քզի։

Ըսաց.— Լաո՛, օր կիգաս, արի էրթանք խրտ ընձի։

Իտոնց հ՚մնուն իզին տվեց, դարձան ետ։ Հ՚ինք ու էն մեկ տղեն ղանչեցին ուրանց աստված, ընկան ճամբախ։ Գացին շատ ու քիչ, մեկ իրեք օր, օր գացին մեկ մեշի մեջ, էն մեշեն մեկ իրեք օր իրեք գիշեր գացին, հեչ ջուր չկա։ Մեկ օրմ լէ գացին։ Տեսան օր մեկ տեխ մի մեկ խորունթ ձոր մը, լսեցին օր մեկ խորունթ տքոց մի կիգա։

Շիրին Շահն ըսաց.— Տղա՛, դու էնա ձին պռնա, ես էրթամ իշկիմ էն ի՞նչ տբոց ա։

Գնաց տեսավ տափե-տափ, տեսավ օր մեկ առուծ մի, դու մ'ըսի առուծի ոտ էղե յարա, էղե քարխեծ, առուծ օտ տնկեր ա, ձեռ կթալա ինչքան փետ ու քար կա, կչարդա, կթալա ուր ցավի զոռեն։

Տղեն ըսաց. «Է, աստված, թե մուրազիս կկասիմ, ես իմ նետ անեղ զարկիմ, էտոր բրին պատռիմ»։

Զարկեց, զարկելու խետ յարեն պատռավ, առուծ ձեռ թալեց ծառեր, շատ ցավ տվեց առուծին, ըսաց. «Աստվա՛ծ, էտոր պատռող իմ ձեռն ընկներ, ջարդենք, մանդրենք, ուտենք»։

Տղեն պախտվեր ա, շանց չի տա զինք։ Տեսավ օր ռհաթավ առուծի ջան, ըսավ. «Է, աստվա՛ծ, էսոր զարկող մրր ձեռ ընկներ, ուր աղեկութեն էնենք, ինչ ուզեր իտենք»։

Տղեն էլավ կանավ հ'առեջ, ըսավ.— Զարկող ես իմ։

Ըսաց.— Դե ուզա՛, քզի տամ։

Ըսաց.— Հայվան, աստծու հայվան, ի՞նչ ուզիմ քըզնե, իտաս ընձի, դու մեկ աստծու հայվան իս։ Ես մուրազ ունիմ, կէրթամ։

Ըսաց.— Մեկ մազ մի իմ պոչեն քաշա, դիր քու կոյդան (ջղղան), ինչ նեղ տեղ ընկար, տուր կրակ, ես քզի կկասիմ, դոր կէղիս էղիս։

Տղեն մալհազա էրաց (մտածեց), ըսավ.— Դու ի՞նչըխ ընձի պտի խասիս, դու աստծու հայվամ իս։

Ըսաց.— Էդ մազի ծանրութեն ի՞նչ ա դու դիր քու կոյդան։

Մազ մի քաշեց, դրեց ուր կոյդնի մեջ, էլավ էկավ։ Էկավ ուր ձիու, ուր ընկերոջ մոտ։ Խեծավ ուր ձին, ու էլան մեկտեխ ընկան ճամբախ, մեշեն դրռ չխլեսեր ա։

Իրեք օր լէ գացին, մեկ բանցր, մեծ ծառի մը ռաստ էկան։ Մեծ ծառի տակ խով էր, պառկան, Աչքեց տեսավ օր ծառի գլուխ մեկ հավքու մը բուն կա։

Շիրին Շահն էր, էդ ծառի տակ քնավ։ Նը քուն էր, նը արթուն էր, մեկ էլ տեսավ վժվժոց մի վերեն էկավ։ Աշեց տեսավ, դու մ'ըսի օր վիշապ մի էլե ղխավքու ձքեր ուտա։ Քաշեց զուր թուր, էլավ, էլավ էդ ծառնըվի, զվիշապ էման մանդրեց, ինչ օր թութունի պես։ Մանդրեց տարավ լցեց ձքերու հ'առեջ։ Ձքեր էդտեխ զօձ թ'ուտին, Շիրին Շահ իջավ քնավ էդ ծառի տակ։

Դու մ'ըսի, էդ հավք-արծիվն ա, էդ յոթ տարի ա ձքեր կխանա, վիշապ սովրեր ա, կիգա, կուտա։ Մեր էկավ, մարդ տեսավ, ըսեց. «Կա՛, չկա՛ էս մարդն է հ'մեն տարի զայ կէնա իմ ձքեր». ուզեց օր-

տա վերուցեր, զաներ քարեր, ջարդեր։ Ձքեր ըսին. «Հե՜յ մամ, էդ մարդ մզի աղատեց, վիշապ էլավ օր մզի ուտեր, էդ օր չէզեր, մզի կուտեր, վիշապ սպանեց լցեց մեր հ՝առեջ, մենք կուտինք։ Աղեկութեն էրաց մզի»։

Էդի օր լսեց, թևեր պռնեց, խով էրաց Շիրին Շահի վրեն։ Շիրին Շահ քնավ, ուր քուն առավ։ Տեսավ օր չադրի պես փա մի վերեն խով էրեր ա, վախեցավ, ըսավ՝ «Է՞դ ինչ բան ա»։

Խավք վերուց ըսեց.— Մը վախենա, էն աղեկութեն օր դու ընձի էրեցիր, ուզա օր քզի տամ։ Էզավ յոթ տարի իմ ձքեր կկորեն, դու աղատեցիր, ինչ քու լեզուն զվրոնա՝ կիտամ քզի։

Ըսավ.— Խավք աստծու, դու խավք մ՝իս, ի՞նչ ուզիմ քըզնե օր դու տաս։ Ես մեկ մուրազ ունիմ, կէրթամ իմ մուրազի հ՝ետև։

Ըսաց.— Օր դու բան չուզիս, թերուր մի քաջա իմ թևեն, առ դնա։ Ինչ տեխ օր նեղն ընդնաս՝ տուր կրակ, կխասիմ ես քզի, դոր էղիս։ Թերրի ծանրութենն ի՞նչ ա։

Տղեն թեբուր մի քաջեց, դրեց կոյդան։ Էկավ ուր ընկերոջ մոտ, խեծան ձիան ու քացին։ Ցոթն օր էզավ օր ծարավ են, դրռ մեշեն չխլըսեր էր։ Տեսան օր մեկ բարակ առու մի կիգա, մեջ լիք գորտնուկ ա, ժժմունք ա։

Ըսաց մշկուն.— Ձին բռնա, ես էրթամ ջուր խմեմ։

Մշակ ձին բռնեց։ Շիրին Շահ գնաց առվի մոտ, էրկու գորտնուկ բռնեց, էն մեկի բերան բացեց էն մեկելի օտներ դրեց մեջ ու ջուր խմեց դարձավ էկավ ընկերոջ մոտ, ըսաց.

— Իդախ դու գնա ջուր խմա։

Ընկեր գնաց տեսավ էրկու գորտնուկ, մեկ էնդին քաշա, մեկ էնդին։ Դարձավ բոռաց. ըսաց.— Շիրին Շահ, արի՜ աչքա տես ի՞նչ բան ա էս տեխ, մեկ էն դիհ կքաշա, մեկ էնդիհ։

Ընկերոջ ըսաց.— Արի՜, արի, հ՝ոդա, ես քզի ըսիմ։

Ընկեր էկավ էդտեխ, ըսաց.— Աստված քու տուն ավիրա, ըտի գորտնուկ ա, ես իմ հ՝մալ էրե։ Դու օր էդ գորտից կվախենաս, ապա ի՞մալ խըտ ձի պտի գաս, Քաջաց էրկիր կռիվ պտի էնիս. դարձի դնա քու տուն։

Էտի դարձուց, ինք մնաց մինակ։ Էկավ ուր ձին թիմրեց, խեծավ, դրռ հըլը մեշա ա։ Քիչ մի մեշի մեջ քնաց, մեկ բարակ հ՝առու մի ջուր կիգա։ Տեսնի օր մրջիմ կիգա, էլ ճամբախ չկա՝ հ՝ընցնի էնդին, կիգա կլցվի ջրի մեջ, կիգա կլցվի ջրի մեջ։

Շիրին Շահ ուր թուր քաջեց, գրեց առվի վերեն, էրաց կարմունջ, մրջմներ վրայեն հ՝ընցան։ Ետք օր էկավ, մեկ մրջիմ մնաց, էդ մրջմի ոտ ընկավ թուր կտրեց։

Էդ մրջիմն էր, ըսաց.— Շիրին Շահ, իմ ոտ դիր քո կոյդան, նեղ տեխ մի քզի ըողըմ կիդա, տուր կրակ, մենք կհասնինք։

Ըսավ.— Աստված քու տուն ավրա, էնա բարակ առուն դու չկարնաս ընցնիս, ապա ի՞մալ ընձի պետք պիտի գաս, դու ի՞նչ իս օր, ես դնիմ իմ կոյդան։

Ըսաց.— Ախպեր, իմ օտաց ծանրութենն ի՞նչ ա, դու դիր քո կոյդան, քզի պետք կիդա։

Շիրին Շահ մրջմի ոտ վերուց դրեց ուր կոյդան։ Էլավ, ղանչեց ուր աստված, ձին խեծավ գնաց։ Օր մը լէ քշեց, էդ մեշից էլավ, ընկավ Քաշաց հողի մեշ։ Տեսավ օր էրկու սար էդտեխ։ Էդ էրկու սար առած իրար կռիվ կէնին։ Մեկ սար կիդա, կզանա էն մեկ սարին, կէղի օր մազի պես կտրի։ Էն մեկ սար օր կզարկա էն մեկ սարին, ըսկի ժաժ չի գա, հ՚ուհու չխլվլա տեխեն։

Շիրին Շահ կաչքա, կըսա. «Էհ, աստված, ի՞մալ բան ա, էս էրկու սար ի՞մալ կռիվ կէնին»։

Դու մ՚ըսեր, էրկուս մարդ ին, ընդոր աչիչ էնպես կէրևան։

Կըսե.— Շիրին Շահ, օրշնալ տեր բարերար աստված, օրտա Շիրին Շահն էլեր զորի դին, օր ավրեր էն անզորի տուն, օրտա նստինք մի քեֆ ու սաֆա էնինք։

Զոռ սարն ըսաց.— Օրշնալ տեր բարերար աստված, օրտա Շիրին Շահն էլեր զորի դին, օր ավիրեր էն անզորի տուն, ես ու Շիրին Շահ նստենք քեֆ ու սաֆա էնենք։

Շիրին Շահին կեր ու խում, ուրախութեն դուր չեկավ։ Ղանչեց. «Աստված, ես էլնենք անզորի դին, օր ավիրենք էն զորի տուն, օրտա նստինք քեֆ էնենք»։

Էն անզոր ղանչեց.— Օրշնալ տեր բարերար աստված քըզի օրշնալ, էն արարողին, օր Շիրին Շահն էղներ էն անզորի դեհն. ավիրեր էն զորի տուն, օր Շիրին Շահն դոր էրթեր, ծառայենք։

Էդ օր էնպես ըսաց, Շիրին Շահին դուր էկավ։ Քաշեց ուր թուր, ղանչեց ուր աստված, զարկեց էն զոռ սարին, էղավ էրկու ջանդակ, մեկ ընկավ էն դին, մեկն ընկավ էն դին։ Էն մարդու անուն լէ Քավանքեշ էր, ձեռ կապեց, Շիրին Շահու հ՚առեջ կանավ։

Ըսավ.— Դու էդ ի՞նչ բանի վրա կռիվ կէնիք։

Ըսավ.— Մենք էրկու զզիրութենի վրա կռիվ կէնինք։ Մեր թագավոր մզի ըսաց. «Որ մեկ օր հաղթեց, ես քաղքի զզրութեն էնոր կիտամ»։

Էրկուս մեկտեխ էկան թագավորի մոտ։ Թագավոր զՇիրին

Շահ տեսավ, ճանչցավ ուր ախպերն ա։ Շիրին Շահ չճանցավ զէտի։

Տարավ թագավոր Շիրին Շահուն շատ պատիվ էրաց։ Ամա չասա, դու իմ ախպերն իս։ Մեկ ժամանակմ մնաց ախպոր մոտ։

Ըսավ.— Շիրին Շահ, դու դո՞ր կէրթաս։

Ըսաց.— Ես կէրթամ Բուհարի հետէ՝ իմ նշանլուն ա։

Թագավոր ղանչեց Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ բերեց, ըսաց.

— Էդի իմ ախպերն ա, գացեք խետ, օր ուրան բան մը էղավ՝ ձղի կվառիմ։

Դրեց խետ, էլան քաղքեն գացին։ Շատ գացին, քիչ գացին. իգոնց խողի միշեն էլան։

Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ ըսեցին. «Մենք է՝լ ըդոր խողի մեջ չի գանք, քզի խրատ մի կիտանք, էդ խրատին դու մուղաթ կեցի, քու մտեն չէլնի։ Կէրթաս էդ Քաչանց քաղաք։ Էդ թագավոր ուր տղի խարսնիքն ա պոներ։ Օր գացիր էդտեխ, կրոռան կասեն՝ «Խողածին էկավ»։ Էդ թագավոր ուխտ էրեր ա. «Չուր հոզածին մի չի գա, ես իմ տղի խարսնիք պտի չէնիմ»։ Օր դու գացիր, թագավորին մուժգա կիտան։ Քղի կառնին կտանին օր քզի էնին քավոր Քզի կէնին քավոր։ Թագավոր քզի կղանչե, կրսե. «Խողածին, ուզա քզի տամ»։ Դու պտի ըսիս. «Ես կուզիմ Զին ի Ճերմկին, Զուխեն Աթաբեկին, Թուր կեծակին». էդ իրեք բան ուղիս, քու մրազին կխասնիս։ Թագավոր քզի կըսա. «Քու գլուխ բի տեսնինք»։ Չէղի քու գլուխ տաս, օր տաս, կառնի ուր ձեռաց մեջ, կճխթա, կէնա լոշ։ Բերիս էրկթե թոփ մի, ուր աչքեր մադուս ա (կույր)։ Փեշտմալ կթալիս թոփի (գնդակ) վրեն, կիտաս թագավորի ձեռ, էն օր կճխթա, համա կէնա լոշ։ Հ՝ետէ կրսա. «Քավոր, ուզա ինչ քու լեզուն զվռնա, տամ քզի»։ Դու պտի ուղիս էդ ձիան օր տվեց քզի, իմա՞լ պտի բռնիս։ Թագավորի մոտեն կուզիս քառսուն ղիդր գինի, քառսուն ղիդր անլվա բուրթ, օր տանիս զանիս էն հ՝աղբրի ակներ, օր ձիան ջուր կխմին»։

Ըսեցին. «Տղա, ել գնա»։

Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ դարցան ետ, տղեն գնաց։

Տղեն հասավ քաղաք, թագավորին մուժդա տվեցին, թե խողածին էկավ։ Թագավոր ղանչեց տարավ ղՇիրին Շահն։ Խարսնիս պոնեց, յոթ օր, յոթ գիշեր տղի խարսնիսն էրաց։ Պրծավ, քավոր ղանչեց, բերեց։

Ըսավ.— Քավո՛ր, տեսիմ քու գլուխ, դու իմա՞լ մարդմ իս։

Շիրին Շահ փեշտմալ դրեց էրկթե թոփի վերեն, դրեց ձեռ։ Ճխթելու խետ, էտ թոփուզ էրաց լոշ։

Ըսաց.— Քա՛վոր, սա՞ղ իս։

Ըսաց.— Կամոք տիրոջ, սաղ իմ, ի՞նչ էղեր ա ընձի։

Ըսաց.—Ուզա՛, քղի տամ։

Ըսաց.— Ի՞նչ ուզիմ, օր ուզիմ՝ չի տաս։

Ըսաց. —Վողդա աստծուն էղի՝ ինչ օր ուզիս իտամ։

Ըսաց.— Ես քղնե կուզիմ Զին Ճերմկին, Զուխեն Աթաբեկին, Թուր կեծակին։ Էդ իրեք բան քղնե կուզիմ։

Ըսաց.— Հա՛յ քու սովրցողի վիղ կոտրի, էդ ո՞րն ա քղի սովրուցի. ըտիկ դժար բան ա։ Զուխեն Աթաբեկին Հնդաքրղի կեճեփի մեջն ա, գացեք բերեք տվեք Քավորին, Թուր կեծակին կպրե կարասի մեջն ա, յոթ տարի ա, իմ աչ չընկեր զէդ թուր, կարնաս, գնա քաշե դուրս բիր քղի։ Էդ էրկուս իմ ձեռն է, լաո՛, տվեցի քղի։ Զին ի Ճերմկին կուզիս՝ Հնդա սարն ա, ես կարող չեմ բռնիմ, թե կարնաս՝ դնա բռնա, բիր քղի։

Տղեն քաղքեն դուս էլավ. գնաց Թուր կեծակին կպրե կարասից հանեց բերեց, Զուխեն Աթաբեկին լէ առեր էր։

Էլավ օր էրթա ձիան բերա, Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ էկան հ՝առեջ։

Ըսավ.— Դո՞ր կէրթաս, դարձիր բուրթ ու գինին բեր, օր էրթանք Զին ի Ճերմկին բերինք։

Շիրին Շահ դարձավ Սանախոր մոտ։

Ըսաց.— Ի՞նչ կուզիս։

Ըսաց.— Քղնե կուզիմ քառսուն ղիդր անլվա բուրթ, քառսուն ղիդր լէ գինի։

Թագավոր ըսաց.— Տվեք քավորին ի՛նչ օր կուզա։

Առեց քառսուն ղիդր գինին ու քառսուն ղիդր բամբակ ու առան տարան Հնդա սար։ Էկան հ՝ախբրի մը վրեն, լուսումութ ա, էդ հ՝ախբրի ջուր չորսով ցամքցուցին։ Բերեցին էդ քառսուն ղիդր անլվա բուրթ զարկեցին էդոր ակներ, էնպես ցամքցուցին՝ օր թացութեն չմնաց։ Քառսուն տիկ գինին լէ լցին էդ դռներ։ Տեղ մի ջինեցին ու պախ մտան հ՝ինք օր ձիան զուրանք չտեսնին։

Էդ ձիանք լէ խրեղեն ին, ծովեղեն ին, հեչ ուրիշ հ՝ախբրին ջուր չխմին։

Օր պախտվան էդտեղ, ձիաներու ժամանակ էկավ, էկան ջուր խմեն։ Կես օրին շոգ զոռեց, Զին Ճերմկին յոթ քուռակ հ՝ետև էկան օր ջուր խմին, տեսավ օր մարդու խոտ էկավ, ջուր չխմեցին, փախան։ Գացին, կես օր կոտրավ, խրամդախ էմլէ էկան, էլի ջուր չխմեցին, փախան։ Էն օր մացին ծարավ։ Օլոր, մեկել օր հարի կե-

սօրին մացին ծարավ, էղավ էրկու օր։ Տեսավ օր շոդ ղոռեր էր, ծարվրցած կէրթան կաշին հ՝ախբրի վրեն շուր չկա։ Կաշին դռներ լիք գինի ա։ Գինին խմեցին ու հարբան, գլոխ ուրանց կախեցին ու կանան էնտեխ մացին։

Էդպես կանան ու կանան։ Շիրին Շահ էլավ զէտ ձին բռնեց։ Տեսավ օր չէ, յոթ տարի չթիմրած ա, թոս բռներ ա։ Լավ թիմար մի տվեց, բերեց թամք զարկեց վրեն, ոտ դրեց զանդուն, էլավ խեծավ, խեծնելու պես ձին հ՝իմցավ։ Ջտղեն բանցրցուց, ըսավ.

— Քզի կիտամ արև, վառիմ։

Տղեն զինք թալեց ձիու փորի տակ։ Ձին ցածրցուց, ըսաց.

— Քզի պտի զարկիմ խողի խետ խավսրեմ։

Օր զաներ գետին, տղեն զինք թալեց ձիու պառեկին, ըսաց.

— Դու ընձի տեր, ես քզի ձի,— ձին ըսաց,— դե թող ընձի, գնա՛ տուն։

Շիրին Շահ ձիու պառեկեն թամք իշուց, ձին թողեց, հ՝ախբրներ բացեց։

Ըսաց.— Տղա՛, մազ մի իմ պոչեն քաշա, դոր օր ուզես, ես էն տեխն իմ։

Ձին գնաց։ Տղեն դարձավ սանախոր տուն, մեկ ժամանակ մը մնաց էդ տեխ։

Էդ տղեն էլավ սանախոր մոտեն քնաց դեմի Բուհարի պապու քաղաք։ «Դոր էրթամ, դոր չէրթամ», գնաց մեկ պառվու մի տուն, էղավ կոնախ։

Ըսավ.— Պառա՛վ, ըդ ի՞նչ խարսնիք ա բռնած։

Ըսավ.— Էդի Բուհարի խաբսնիքն ա բռնած։

Ըսավ.— Պառա՛վ, դու չկրնա՞ս էրթաս թագավորին ըսիս. «Քու ախչիկ տու իմ տղին»։

Ճանկ մի օսկի տվեց պառվուն, լավ շորեր առավ։ Պառավ էլավ գնաց թագավորի մոտ։

Ըսավ.— Քու ախչիկ իտաս իմ տղին։

Խնամաթոռք բերին, պառվու տակ դրեցին։

Թագավորն ըսավ.— Դու չըս կարնաս իմ կալան տաս։ Գնա, քու տղին ըսա ուր ձին իմ ձին կընցնա՞, օր չընցնա, ուր գլուխ կդարկիմ։

Էկավ տղին ըսաց.— Հմլա փա մի կա։

Ըսաց.— Դու արի պառկի, աստված օղորմած ա։

Լուս օր բացվավ, վըր քզի, վըր էտոր, ձիու մազն էտու կրակ, ձին ֆռֆռալեն էկավ, հ՝առեջ կանավ։ Լավ թիմար մի տվեց ձիուն. էլավ խեծավ, տեսավ օր թագավոր ձին խեծեր, կաներ մեյդան։

Զին Շիրին Շահին խրատ տվեց, ըսաց.

— Շիրին Շահ, ես քզի խրատ մի կիտամ, իմ խրատ չէղնի մոռնաս, իմ կողեր աբրկի (ապակի) ա, չէղի՛ զանգու (ասպանդակ) ղանիս, ըդի իմ մոր քուրն ա, էն լէ պակաս ձի չէ։ Օր զանգու զանիս՝ իմ կողեր կկոտրի, քզի կվնասիմ։

Էդի օր խեծավ ձին, գացին մեյդան, ըսաց.

— Թագավորի ձին ընձի կըսա. «Հուշիկ գնա, օր ես խասիմ քզի». դու մը վախենա, իմ գլուխ հ՝առեջ ա։

Մեկ քանի մեյդան գացին, էկան տեսավ չէ, Բուհար փանջարից գլուխ հանե դուս, թամաշա կէնա, տղեն զԲուհար տեսավ խելք գնաց, զանգու մի զանեց, էրկու զանդուն ջարդեց զձիու կողեր, էկավ, քիսավ հ՝իրար։ Զին առավ զտղեն էլավ երկինք։ Տարավ զարկեց Հնդա սար։ Էդ սար լէ մխլատուզ ա (մագնիս), տարավ կպուց էդ պալեր (ժայռ)։ Զին դարձավ գնաց ուր տեխ։

Շիրին Շահ մնաց կպուկ էդ տեխ, չկարնա օր էլի, քանի էլի, կքաշա։

Շիրին Շահի ախպեր Քոչո, թուղթ գրեր է զաներ գուռ, ինչ ժամտնակ օր ախպոր վնասութե մի էղնի, էդ թուղթ սևնա, պատի ուր հ՝առեջ։

Քոչոն առավոտուն էլավ, օր լվացվի, տեսավ օր թուղթ սևցե, պատե ուր հ՝առեջ։ Ղանչեց, ըսաց.

— Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ, մկա ձզի կվառիմ, խասեք իմ ախպոր, իմ ախպեր նեզութենի մեջ ա։

Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ ըսին. «Մենք պտի էրթանք ձիու մոտեն խարար առնինք»։

Գացին տեսան օր ձին էղեր է սատկելու, կսատկի։ Թալեցին ձին գետին, նեխի, լավ մի լվացին կշտներ, կողեր, դեղ բերեցին մեկ ժամանակ մի դեղեցին սաղցուցին։

Ըսեց.— Էդ մարդ բեբախտ էր, օր գուք չէղեք, ես էդ մարդ չպրծուցեր, ամա օր դո՛ւք եք, կէրթամ կբերիմ։

Գնաց տեսավ օր տղեն համա խոդի կիտա։ Պառեկ տվեց տըղին, տղեն խեծավ, առավ էկավ։

Տղեն դարձավ էկավ Բուհարի պապու քաղաք։ Գնաց պառվու տուն, պառվուն ըսավ.

— Գնա թագավորին ըսե. իմ նշանած թ՝իտա, առնիմ էրթամ։

Պառավ գնաց թագավորին ըսեց.— Իմ հարս տուր տանիմ։

Ըսաց.— Օ՜, դրա շատ բան կա, թե քո տղեն կատարեց, կիտամ, թե չկատարեց՝ գլուխ ՝ զանիմ։ Առուծ ունիմ, իմ առու-

ծի խետ կռիվ էրաց, թե հաղթեց, իմ ախչիկ կիտամ, թե՝ չհաղթեց՝ գլուխ կղանիմ։

Պառավ էկավ Շիրին Շահին ըսաց։ Շիրին Շահ լէ ջուաբ էրաց թագավորին. «Թրիս ուր առուծ պատրաստե օր առավոտուն իմ առուծի խետ կռիվ էնա»։

Քնան, լուսումտին էլան վե։ Տեսավ օր թագավոր ղուր առուծ հաղրեր ա, կաղեր ա դուու։ Գնաց առուծի մաղ տվեց կրակ, առուծ էկավ։ Էս առուծ չոլի առուծ ա, մեկել առուծ տան առուծ ա, ի՞նչ պտի էնա չոլի առուծին։

Մախլուխ (բազմություն) լցվա՞ծ ա, օր հաշիվ չկա։

Տղի առուծ էկավ, դնաց զարկեց թագավորի առուծին, կտոր մի էնդին թալեց, կտոր մի էնդին թալեց։ Ջարդ ու փուրթ էրաց մաղ մի քաշեց պոչեն, առավ դնաց։

Պառավ էլի ճամբեց թագավորի մոտ։

Թագավորն ըսավ.— Գնա քու տղին ըսա, ես առծիվ կուղիմ օր իմ առծվու հետ կռիվ էնա։

Պառավ էկավ տուն։ Տղեն ըսաց.— Աստված օղորմած ա։

Լուսումտին դնաց, տեսավ թագավորի առծիվ կապե, ըդտեղ գլուխ դես կղանա, դեն կղանա, քաղքի մախլուխ թափած՝ սեր կէնին։

Տղեն դնաց մեկ դիան, թեփուր տվեց կրակ, առծիվն էկավ, զարկեց, զարկեց թագավորի առծրվուն, ամեկ պըպուկ ախշար մի թալեց։

Գնաց ուր տեխ նստավ, ըսաց.— Պառա՞վ, գնա թագավորին ըսե՝ «Ինչ օր ըսեց կատարեցի, թ'իմ նշանած տա»։

Թագավոր ըսաց.— Գնա քու տղին ըսե, քիլե մի մարգրիտ կցանիմ խերկի մեջ, թե որ ժողվեց, իմ ախչիկ կիտամ ուրին, թե չ'ժողվեց, մեկ պակաս մնաց՝ գլուխ կղարկիմ։

Էկավ տղին ըսաց։ Տղեն լէ ըսաց. «Է. աստված, ձին ուղեց՝ էղավ, առծիվ՝ առծվու խոնարհն էր, առուծ առուծու խոնարհն էր, մկա ես մարգրիտ իմա՞լ ժողվիմ խերկի մեջեն»։ Տղեն էլավ դնաց տեսավ շնիկ դրած ա էդա տեխ, մարգրիտ ցանած խերկի մեջ շուռ տված, մեկ չէրևնա։ Էնքան օլորտավ, օլորտավ, մեկ չկարցավ գտներ։

Տղեն դադրավ, շատ նեղեցավ, տեսավ օր մեկ բան ուրին խաթեց, աչքեց օր մրջիմ։ «Ջանըմ,— ըսեց,— մրջիմի օտք տանք կրակ»։

Տվեց կրակ, տեսավ օր թուփալ մրջիմ մեկ խատ բերեց թալեց շնկի մեջ, դետին թնդաց ու էկան մրջմներ ու քոմին քոմեցին, քո-

մին շնիկ լցին, մնաց մեկ պակաս։ Շատ օլորտան, չկարցան գըտնան, թոփալ մրչիմ զէն մեկ լէ գտավ, առավ բերեց։

Զշնիկ տարան դրին թագավորի հ՚առեջ։ Տեսավ ինչ ուր խոսքն էր՝ կատարեց։

Հ՚իրկուն էր, էկավ, պառավ ճամբեց թագավորի մոտ։

Թագավոր ըսաց.— Կուգիմ զուր ձին բերա իմ ձիու խետ էրթանք խոշ։ Թը էլավ իմ ձիու խեչ, զախչիկ կիտամ, թը չէլավ՝ գլոխ կզանիմ։

Պառավ էկավ տուն, ըսաց.

Լուսումտին ձին խեծան, էլան մեյդան։ Էլի ձին խրատ տվեց տղուն։ Քանիմ խոշ օր գացին էկան, տղեն էլի Բուհար տեսավ, զանգու մի օր զարկեց, էլի ձիու կշտներ կոտրեց։ Էլի ձին առավ զտղեն տարավ զարկեց Հնդա սարեր։

Տղեն մնաց էն տեխ, ձին դարձավ ուր տեխ։

Իր ախպեր Քոչո հ՚իմցավ թը ուր ախպեր նեղն ա։ Ղանչեց Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ, ըսավ.

— Իմ ախպոր վրեն նեղած ա, խասեք իմ ախպոր։

Սըաս, Կաղ Օզան, Քավանքեշ էլան գացին ձիու մոտ, տեսան օր ձին էլի պատուկ ա, բանեն էլեր ա։

Շատ պաղաչեցին, խնթրվան ձիու մոտեն, թալեցին գետին, սաղցուցին։

Ձին ըսավ.— Բեբախտ մարդ ա, չաղատիմ։

Շատ խնդրեցին, ձին գնաց, զտղեն ազատեց ու բերեց, ըսաց տղին.

— Զէլնի էման բան մեկ լէ էնիս։

Շատ ժամանակ էտոր մեջ ընցավ, տղեն գնաց պառվու տուն։

Պառավ ըսավ.— Քու նշանած կկարգին, կիտան ուրիշի։

Պառավ էլ թագավորի մոտ չկըրնա էրթա։ Գնաց ախչկան մոտ, ըսավ.

— Շիրին Շահ էկեր ա։

Ախչիկ ըսաց.— Հ՚եսօր իմ խարսնիք կէնին, ընձի կիտան ուրիշի, կրռնա, թըխ չարեմ էնա։ Ես առեր իմ աղուն իմ ձեռ, կխմիմ օր իտան ընձի ուրիշի։ Ես մե թարիֆ կէնիմ ուրին՝ չէղի մոռնա։ Ես կէլիմ ֆլան սհաթին կէրթամ խաս-բաղչեն։ Հ՚ինք թ՚իգա, ինչքան ման կա էնտեխ՝ թը կոռծա, չէղի մեկ թողա բաց, օր մեկ մնաց բաց, կբռռա՝ «Խողածին տարա՞վ զխրեղե՞ն»։

Շիրին Շահ ասած օր կէրթա խաս-բաղչեն, ինչ ման օր կա, ջոջ, պստիկ՝ հ՚ըմեն կկոռծա։ Դու մ՚ըսի մեկ շան լակման մացի

բաց։ Օր Շիրին Շահ կէրթա խաս-բախչեն, ախչիկ խաս-բախչեն ա, փախցու, շան լակաման կբոռա՝ «Խոզածին տարա՜վ ղխրեղեն»։

Հավար կինի քաղքի մեջ թր տարան ղԲուհարին։ Կհեծնին կէլ-լին ասպար։ Ասքար կինին հ՚ետև, ըտիկ քաղքեն կհեռենա, մեկ չորս-իինգ սհաթվան ճամբախ ձիեն կիջնա տակ, կըսե. «Ես Շիրին Շահն եմ հ՚ուր կհեռնամ՝ առանց կռվի»։

Լուսումուտ օր կբացվի, կաչքե հ՚ետևանց կտեսնի օր խոզին, քարին, թփին իսաբ կա, էդ ասքրին չկա։

Բուհար կըսե.— Շիրին Շահ, ընչի՞ չքշիս։

Շիրին Շահ կըսե.— Չէ՛, առանց կռիվի չըմ էրթա։

Դառնա մըշ ասքրին, Թուր կեծակին կիտա հ՚առեջ, մեկ դին ինք կշտրդա, մեկ դին Ձին Ճերմակին։ Մեկ թուր ինչ կթալա, խա-զար մարթ կբերա ցած։

Շատ կկռվի, մինչև կեսօրին, ինք լէ, ձին լէ կնեղենան։ Գելի ասքրին զինք կիտա մեկ դին, կըսե. «Օրշնալ բարերար աստված, քըզեն օրշնալ է՛ն արարողին օր պիտեր մե պողպատե բերթ մի, Բուհար տենք իրեն ամանաթ (ավանդ) օր դառնենք կռիվ էնենք՝ ջանիս ի վերա»։

Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ ընտեխ կանան, ըսին.

— Օրշնալ տեր բարերար աստված, քըզեն օրշնալ, է՛ն արարո-ղին ես պողպատե բերթ դարգախն ի վերա, քուր, տուր ախպոր ամանաթ, դարձիր կռիվ էրա ջանիդ ի վերա, մի՛ վախենա։

Էղի մահվա չէկավ (չվստահեց), Բուհարին չտվեց, էլի դար-ձավ կռիվ էրաց։ Մինչև հ՚իրիկուն կռիվ էրաց, մնաց, հ՚իրիկուն մութն օր տվեց, կռիվ դարձավ, ամեն ուր տեխ գնաց։

Բուհար ըսաց.— Շիրին Շահ, քշա, էրթանք, ազատվինք։

Առավոտուն էլի տշեց, օր կռիվն էկավ։ Էլի կռիվ էրաց։ Շի-րին Շահ շատ ջարդեց, մեկ ինք, տաս՝ ձին։

Էլ ղանչեց. «Օրշնալ տեր, բարերար աստված, քըզէն օրշնալ, էն արարողին, օր պիտեր պողպատե բերթ մի, օր տա Բուհար դը-ննենք հ՚ինք, դառնենք կռիվ էնենք ջանիս ի վերա»։

Էլի Օզան, Կաղ Օզան, Քավանքեշ հ՚առեջ կայնան, ըսաց.

— Օրշնալ տեր բարերար աստված մամ տու տղին ամանաթ, դարձի կռիվ էրա, ջանիդ ի վերա։

Էլի մահվա չէրաց, զախչիկ չտվեց։ Դարձավ կռվու մեջ, շա՜տ ջարդ էրաց, շոգեց, նեղեցավ։ Դարձավ էլավ դուս։

Ղանչեց՝ «Օրշնալ, տեր բարերար աստված օր պտեր պողպա-տե բերթ՝ դարգախն ի վերա, Բուհարին տենք դառնենք կռիվ էնենք ջանիս ի վերա»։

Օզան, Կաղ Օզան, Քավանքեջ էկան, ըսին.

— Մենք էղենք պողպատե բերթ դարգախն ի վերա, Սանամեր-տուր Քավոր ամանաթ, դարձի՛ր կռիվ էրա ջանիդ ի վերա, մի՛ վա-խենա։

Շիրին Շահ Բուհարին թալեց, տվեց քավորոջ ամանաթ, դար-ձավ կռիվ։ Շատ կոտորեց, անթիվ ջարդեց, հազար հ՚ինք, հարիր հազար՝ Զին Ճերմկին։

Շիրին Շահ բիրադի ջարդեց, մեկ խաբրաբեր թողեց։ Էղավ հ՚իրկուն, մութ տվեց էդ տեխ։

Ղանչեց պողպատե բերթ, բացվավ, Բուհար խանեց դուս։

Բուհար ըսավ.— Շիրին Շահ, էլ էրթանք, խերիք ա, կարելի ա հ՚ետուց ասքար իգա։

Շիրին Շահ ըսավ.— Չէ՛, չըմ էրթա, պտի մնամ առավոտուն, կուզիմ ես էտոր քոք բերիմ։

Քնան, տեսան օր արև առավ։ Տեսավ, ի՞նչ տեսնի, էման աս-քար էկե, խոշուն էնքան շատ է, էլ հարիր հազար չէ, միլիոնով ա։

Շիրին Շահ շուտով չհ՚իմացավ։ Ասքար նստուկ տեխ բռնեցին Շիրին Շահու վրեն։ Շիրին Շահ լէ չկըրցավ էլներ ձիու վրեն։ Բու-հար դինք թալեց վըր ձիուն։ Ընդոնք չզարկին Բուհարին, Բուհար կչարդա, ձին Շիրին Շահն առեր օտներու մեջ, վնաս չի տար։

Խաբար վի՞ն տանք, խաբար տանք Քոչոյին։

Քոչոն ըսավ.— Իմ ախպեր ժամանակմ ա, գացեր ա, էլեք էր-թանք իմ ախպոր հ՚ետևեն։

Քոչոն էր, էրաց ասքար, շատ խանեց ասքար ու էկավ։ Քոչո խապար չունի օր ախպեր նեղն ա, միամիտ կիգա։

Էկավ տեսավ մեկ ձիու օտաց մեջ։ Ըսեց. «Ըհա՜, իմ ախպեր նեղն ա, քշեք օր հասնինք»։

Էկավ, մոտեցավ, տեսավ թե մեկ կարմիր բան կռիվ կէնա։ Ըսաց. «Վոլա, էնի խաբսն ա»։

Խետ մոտեցավ, տեսավ ախպեր ձիու օտներու մեջն ա, խարա կռիվ կէնա։

Ախչիկ տեսավ օր տեզրն էկավ, թամազին (քող) քաշեց վըր դլխուն, երեսին ու զինք տվեց մեկ դին։

Քոչոն բոռաց.— Խարսնութեն չո՛ւզա կռիվ էրա, չուր մենք խասնինք, զա՛րկ։

Քոչոն խասավ, զարկեց, զարկեց, զախսլեր ձիու օտներուց խանեց։ Շիրին Շահն էր էլավ զինք թալեց ձիու պառեկին, խեծավ։

Բոռաց.— Քոչո, քու ասքար տու մեկ դին, չըմ ճանչնա, ես կընկնիմ ասքրի մեջ։

8—1086

Շիրին Շահ դրա չճանչցեր զախպեր։

Քոչոն ըսավ.— Դու նեղեցուկ իս, քզի մեկ դին տուր, դու դադրուկ մարդ իս։

Շիրին Շահն ու Բուհար քաշվան, Քոչոն ընկավ մըջ ասքրին։ Ջասքար ըիրադի կա, չկա ջարդեց բան չթողեց։

Քոչոն ըսաց.— Շիրին Շահ, դե էլ էրթանք մրր տուն։

Բուհար ըսաց.— Շիրին Շահ, դու քոռ իս, քու ախպերն ա. չճանչնաս։

Օր ըսաց «Քու ախպերն ա», Շիրին Շահ համա վազեց, դինք թալեց ախպոր օտներու վերեն։

Քոչոն առավ զախպեր ու հարսր, բերեց տուն։ Ուրախացան իրարու վերեն։

Շիրին Շահ ինչ օր ուր դլխու դալածն էր Քոչոին կըսա էրաց։

Քոչոն էլ ըսաց.— Ես էրեխա ենք, ընձի թալեցին ծովու մեջ, էկա։ մեկ մարդ ընձի բռնեց տարավ պախեց, մեծըցուց։ Մեծցա, էկա էդա տեխ էղա թաղավոր։

Մեկ տեխ մնացին ժամանակ մի, մեկ քանի տարի Քոչոն էլավ ասքար էրաց, մեկ չորս խինդ խարիր ձիավոր Շիրին Շահ դրնց ճամբախ, ուր խողեն խանեց։ Ախսլոր մոտեն խաթըր առավ, ինք դարձավ ուր քաղաք, Շիրին Շահ դարձավ ուր պապու քաղաք։

Էկավ մոտեցավ, մուժդա դնաց պապուն, օր Շիրին Շահն էկավ։

Մուժդա բերողին լավ պատիվ տվեց թագավոր։ Պապն էր, էրաց ասքար դնաց հ'առեջ դհոլով ղուռնով, գուսանով գնաց տղի հ'առեջ, առավ էկավ։

Բռնեց խարսնիք ու մեծամեծ մարգեր ղանչեց, ուր խարսնիք յոթ օր բռնեց, տղեն տարավ փսակեց։

Յոթն օր, յոթ գիշեր խարսնիք լմեցավ։

Ուրանք հասան ուրանց սրտի մուրազին, դու լէ խասնիք ձրր սրտի մուրազին, ինչ օր խնդիրք կա աստված կատարա։